



Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0264

Տրված՝ 18.12.2020 Բայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պաշտոնատեսության հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փլըֆեթ» Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010

Տիգրան Մեծ 4

Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթեր» ՍՊԸ-ի բաժնետերերին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, քվոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից թխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների

աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության նշադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է

ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամուտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների

վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Շնկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

«Փըրֆեկթ Աուդիտ» ՍՊԸ

Աղավնի Բարայան

Տնօրեն-բաժնետեր
առաջադրանքի պատասխանատու

2023 թ. սեպտեմբերի 28

Երևան, Հայաստանի Հանրապետություն



**ՀԱՅՈՒՅԹԻ ԿԱՏ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱԴԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով**

	Ծան.	2022	2021
Հասույթ	5,21	9,813,614	7,272,955
Վաճառքի ինքնարժեք	6,21	(6,464,000)	(5,201,808)
Համախառն շահույթ		3,349,614	2,071,147
Ֆինանսական շահույթ		1,240	1,689
Վերանայման գծով օգուտ		-	-
Արտարժույթի փոխարկումից օգուտ/(վնաս)		2,063,157	1,306,248
Այլ եկամուտ	7	415,566	221,532
Տարածման և շուկայավարման ծախսեր	8	(1,862,246)	(1,616,533)
Վարչական ծախսեր	9	(526,751)	(505,981)
Այլ ծախսեր		(56,086)	(20,030)
Ֆինանսական ծախսեր	10	(481,526)	(624,722)
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը		2,902,968	833,350
Շահութահարկի գծով եկամուտ/(ծախս)	11	(116,977)	25,450
ՀԱՅՈՒՅԹ/(ՎՆԱՍ) ԵՎ ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱԴԱՐՓԱԿ ՀԱՅՈՒՅԹ/(ՎՆԱՍ)		2,785,991	858,800

Վլադիմիր Դանիելյան
Գլխավոր տնօրեն



Էլմա Հարությունյան
Գլխավոր ֆինանսական տնօրեն

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՏԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով**

	Ծան.	2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	12	3,708,714	4,145,668
Ակտիվների օգտագործման իրավունք	13	175,604	184,190
Ոչ կյուրախան ակտիվներ		5,527	4,430
Հետաձգված հարկային ակտիվներ	11	143,124	260,101
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		7,232	14,379
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		4,040,201	4,608,768
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	14	1,336,224	597,980
Սուևտրային և այլ դեբիտորական պարտք	15	1,434,085	871,754
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	462,241	58,475
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,232,550	1,528,209
Ընդամենը ակտիվներ		7,272,751	6,136,977
<i>Մեփախան կապիտալ և պարտավորություններ</i>			
<i>Մեփախան կապիտալ և պահուստ</i>			
Թողարկված կապիտալ	17	2,069,602	2,069,602
Եմիսիոն եկամուտ	17	369,875	369,875
Հավելյալ վճարված կապիտալ		922,032	922,032
Կուտակված վնաս		(5,668,036)	(8,454,026)
Ընդամենը սեփական կապիտալ		(2,306,526)	(5,092,517)
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	18	1,541,313	2,213,385
Վարձակալության պարտավորություն	13	58,820	82,564
Պետական դրամաշնորհ		-	11,952
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,600,133	2,307,901
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարձաժամկետ վարկեր և փոխառություններ	18	6,099,401	7,493,943
Սուևտրային և այլ կրեդիտորական պարտք	19	1,827,597	1,382,588
Վարձակալության պարտավորություն	13	52,146	45,062
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		7,979,144	8,921,593
Ընդամենը պարտավորություններ		9,579,277	11,229,494
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		7,272,751	6,136,977

Վլադիմիր Դանիելյան
Գլխավոր տնօրեն

Եմա Հարությունյան
Գլխավոր ֆինանսական տնօրեն



**ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով**

	Ծան.	Բաժնետիր ական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Հավելյալ վճարված կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ		2,069,602	369,875	922,032	(9,312,826)	(5,951,317)
Տարվա շահույթ Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		-	-	-	858,800	858,800
Տարվա շահույթ Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2,069,602	369,875	922,032	(8,454,027)	(5,092,517)
Տարվա շահույթ Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		-	-	-	2,785,991	2,785,991
		2,069,602	369,875	922,032	(5,668,036)	(2,306,526)

Վլադիմիր Դանիելյան
Գլխավոր տնօրեն

Եվա Հարությունյան
Գլխավոր ֆինանսական տնօրեն



ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԳԱՀՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ԳԱՄԱՐ
Դազար 33 դրամով

	Ծան.	2022թ.	2021թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Տարվա շահույթ/(վնաս)		2,785,991	858,800
Ճշգրտումներ			
Շահութահարկի գծով եկամուտ/(ծախս)	11	116,977	(25,450)
Եկամուտ ակտիվների մասով դրամաշնորհներից		-	(29,079)
	6,8,9,1		
Մաշվածություն և ամորտիզացիա	2	637,324	659,801
Հիմնական միջոցների օտարումից վնաս	12	(345,000)	(2,618)
Արժեզրկման հակադարձում/կորուստներ դեբ. պարտքերի վրա	15	(14,710)	(9,689)
Պաշարների արժեքի նվազեցում մինչև իրացման զուտ արժեք	14	93,062	108,347
Ֆինանսական ծախսեր ճանաչված շահույթում և վնասում	10	481,526	624,722
Ֆինանսական եկամուտ ճանաչված շահույթում կամ վնասում		(1,674)	(1,689)
Վերանայման օգուտ ճանաչված շահույթում կամ վնասում		-	-
Չուտ արտարժույթի փոխարկումից (օգուտ)/վնաս		(2,063,157)	(1,306,248)
Գործառնական դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալում փոփոխությունները		1,690,339	876,897
Սուկուրային և այլ դեբիտորական պարտքի (աճ)/նվազում		(548,142)	(183,981)
Պաշարների աճ		(738,244)	(296,229)
Սուկուրային և այլ կրեդիտորական պարտքի նվազում աճ/(նվազում)		445,008	442,322
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		848,961	839,009
Վճարված տոկոս	18	(167,784)	(259,975)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		681,177	579,034
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(400,971)	(351,852)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից մուտքեր		604,316	1,789
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		203,345	(350,063)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Մուտքեր վարկերից և փոխառություններից	18	980,218	1,416,716
Վարկերի և փոխառությունների մարում	18	(1,447,131)	(1,599,116)
Վարձակալության պարտավորության մարում	18	(50,932)	(46,571)
Ֆինանսական գործունեությունում (օգտագործված)/ ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		(517,845)	(228,971)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		366,678	
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարվա սկզբում		58,475	54,579
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մաքուրների վրա		37,088	3,896
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարվա վերջում	16	462,241	57,475


 Վլադիմիր Դանիելյան
 Գլխավոր տնօրեն




 Լմա Զարյան
 Գլխավոր ֆինանսական տնօրեն